

ԵՐԱՆԻ
ՏԱՐԻ

ՇԱԽԻՂ

ԵՐԱՆԻ
ՏԱՐԻ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻԹ

ՇԱԽԻՂԻ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ՇԱԽԱՐ ՕՐԵՐԸ

«ՇԱԽԻՂԻ» Տարեկան գինը 10 դրամ, կես տարուանը 6 դրամ: Առանձին | «ՇԱԽԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրախէ
Պատկերները 5 շահի: Արտանմանները տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, եւ տուն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւնը ընդունուած է ամիս
կէս տարուանը 5 ֆր. կամ 2 իւրքի: Թէ հրատու գրուած են միմյաւրջ լեզուով: Յայտարարութիւնների համար վճարուած են իւրեքանգիւր բաւական
խմբագրատան մէջ: Մեր հասցեն, Téhéran, Rédaction CHAVIGH: 1 շաբաթ 1 շաբաթ

Մեր ընկերութիւնը Ներքին Տեսութիւն
Նամակներ խմբագրութեան, Ներքին լուրեր, Ար-
ՏԱՐԻՆ ՏԵՍՆՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր, Հեռու-
Գիրքեր, ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲՈՐՍԱ,
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ղարաղան դաւաճել:

Մեր «ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ»
Մենք անխիթ ենք ունեցել ստորանից
բառաջ էլ անխիթ որ պարսկահայերի
մէջ գիւղական ազգաբնակիցութիւնը, բա-
ղաբուն լեռնակողների տասնամյա տիրի
լինելով «Շախիղը» մասնաւորապէս զը-
նուիրէ քեր ուշադրութիւնը գիւղական
հայերի կեանքին, ուրախութեամբ կը հիւ-
րենկալէ իւր էջերում որ և իցէ ուսում-
նասիրութիւն այդ կեանքի մասին, և
կարծարծէ, որչափ թույլ կը տան նորան
նորա աջակիցների ձեռնահասութիւնը,
նոցա նիւթական բարօրութեան և բարո-
յական զարգացման վերաբերեալ ամեն
հարց:
Գիւղական հասարակութեան նուիր-
ւած ջանքերի մէջ բաւաճին պէտք է բա-

նում, որպէս կազմակերպուած մարմին,
Դավրէժու «Մեր» ընկերութիւնը, որ
հաստատուած է 1891-ին ի վեր պ. Սեդ-
րակ Միրզոյեանի նախաձեռնութեամբ:
Աւելի առաջ ունենալով նոյն ընկերու-
թեան կանոնադրութիւնը, մենք տես-
նում ենք որ նորա հիմնադիրները կա-
տարեւապէս գիտակից են գիւղական տար-
րի խաղացած դերին ընդհանուր քաղա-
քակրթութեան գործի մէջ, և իւրեանց
համար գծել են գործունէութեան մի
փառաւոր ասպարէզ: «Աշխատել հայ
չքաւոր փարբի մէջ տարածելու ուսուցան
և գիտութիւն (և երբեմն էլ արուեստներ)
նամանաւանդ գիւղական տարրի մէջ.
աշխատել, որքան կը ներեն իւր նիւթա-
կան կարողութիւնները, բարձի թողի ա-
րած հայ գիւղերում և մասամբ էլ քա-
ղաքներում բաց անելու ուսուցանարան-
ներ և մասնաւորապէս ընթերցարաններ
ժողովրդական գրքերով—շատ անգամ տե-
ղական ժողովրդի աջակցութեամբ»: Ահա
այդ ընկերութեան նպատակը:

Մենք լսում ենք որ այդ ընկերու-
թիւնը արդէն բացել է Սալմաստի Մոհ-
լամ գիւղում մի ուսումնարան, և ու-
ղարկել է այնտեղ մի շարմար ուսուցիչ,
ընկերութեան միջոցների վերալ մէջ
տեղեկութիւն չունենք, և այսպէս որքան
որ գործող մարմինը ժամանակին հրա-
տարակութեան վրաստիւր գործունէյոց-
թեան տեղեկագիրը, որից յետոյ անելի
դիւրին կը լինի ճիշտ գաղափար կազմել
նորա մասին, առ այժմ մենք չենք կա-
րող լուրութիւն պահել և չը լայտնել մեր
համակրութիւնը, քաղաքի օգտակար մի
հաստատութեան մասին:
Սովորաբար մեր քաղաքների մէջ գրո-
տուող երիտասարդութիւնը այնքան քատ
է որքան որքան իւր տեղական հաստատու-
թիւններով, իւր մի փոքրիկ ուսումնա-
րանով կամ մի ընթերցարանով որ կար-
ծում է թէ այն տեղ գրչանում է աշ-
խարհը, գուրբը, գիւղերիւմ, հազար հա-
զար ինտանիքներ մնում են գուրբ լուրի
ամենանունը մի շողքից, և քաղաքացի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
(Ղարաղան Դաւաճը)
Այս գաւառի անբերք Ղարաղան, Թուրքիոյ մի
թաղ գաւառ է որ նշանակուած է, «Ան արիւն», Թէ
նշան այս անբերք է կոչուած այս գաւառը, չը կա-
րողացող բոլորէ, միայն տեղացի ժողովները պատ-
մում են Թէ, որքան տեղ այս անբերք մասնաւոր
կուսիւնը շատ մարդ է սպաննել տարերի եւ ձորերի
մէջ, այդ է պատճառը որով այս անունով կոչուելու:
Բազմաթիւ մեծամեծ գիւղեր, կան այս անուն
պալի որոնք բաւական շահաւոր խաղի են տալիս
կալիւստատերերին: Դաւաճը բաժանուած է Կրիու
մասերի, որոնք կոչուած են Օվարի կամ վերին Դա-
ւաճի, եւ Սովալի Դաւաճի:
Այս գաւառը չորս կողմից շրջապատուած է Ռինդ
քաղաքներով, Հրախից ունի Զենցանը, Հարաւից
Ղուն, Արեւելեան կողմից Թէհրանը, Արեւելեան
պից Դաւաճի, և Արեւմտեան կողմից Համաղանը:
Հայաբնակ գիւղերից դէպի այս քաղաքներից իւրա-
քանիւր 3 օրուան ճանապարհ է. ուրեմն ընթեր-

ցողը կարող է երեւակայել որ հայոց Դաւաճանը
ինկած է այս գաւառի կեդրոնում: Սալա կոչուած
աւանն ինկնում է Հայոց Դաւաճանի, Հարաւային
կողմը, դեռ Ղուն չը հասած (ընթերցողը գիտէ գուցէ
որ այս անբերք արտադրում է շատ գովելի նուշ):
Ի բաց առեալ հայերը, Դաւաճանի բնակիչները
շատ անասն տեսակ, բայց մանր ցեղերից են բաղ-
կացած, օրինակ քիւրդերը մի յատուկ ցեղ են, քիւրդ-
խալիսները յատուկ, արաբները մի ուրիշ, մաղ կա-
պող քովիները մի այլ, հասարակ թրքախաւ մահմե
տականներ եւայլ: Կան եւ ալի-պալիս, որոնց ու
պարածող անունն են տալիս: Սորա բացթողն չա-
նուկ մի կրօնք ունին, զի մի այլազգի չէ կարող
ներկայ լինել աղա որ եւ իցէ մի կրօնաւոր ժողովին:
«Ղուր-փով» անունով մի տունն են, որ տեւում
է 40 օր երբ ամեն գիշեր պիտի ելին տեսակ տե-
սակ փաւներ, եւ պիտի հաւաքուին սելիդների տը-
ները, եւ այն տեղ լայնատարած սեղան փաւով պ-
մննքն ի միասին պիտի փաւեն սելիդի օրհնելուց
յետոյ: Եւ բաց իրանց մի օտարական այդ փաւի
չուրը կամ թրքած բրինձը եւ կամ եփած փաւի ա-
մանը (երբ որ տանում են սելիդի տունը) տեսնե-
լու լինի, այն փաւին այլ եւս ձեռք չեն տալ եւ

Թափն հոգիս դրովհետեւ «նամահրան» տեղ տե-
սել է այդ:
Պատմում են Թէ, ընթերցող յետոյ տուն գիշեր-
ները մի հար մեծ անտառաբնակ գետում են, մա-
տուցարանի երեսին քաղած կալ մի մեծ անտառաբնակ
Թալիսնակ մի որոշ ժամանակ այս Թալիսնակի տա-
կից դուրս է գալիս մի մեղք եւ երեւում է նստող
ներին: այնուհետեւ մի կարճապատակ մարդ է երե-
ւում մատուցարանի մէջ տեղում 8—9 տարեկան երե-
խայի բարձրութեամբ, սեղանակ ձուլական հազած,
եւ մետաքսեայ մի Թալիսնակը զիկն ձգած որպէս
բող, պարծւում է այնպէս որ երեւո փաւներ կարելի
չէ: Եւ Թէ այդ միջոցին մի այլազգի ելնէ այդ անե-
կի տանիքի վերայ երկից դարանց գաղտնիքը տես-
նելու, անմիջապէս գիւղական անձը կը դադրի պա-
րելուց, որից կիսման Թէ մի օտարականի ոտը կայ
տանիքի վերայ, որին եւ Թէ տեսնեն, կրպակնեն:
Մի քանի հայեր, որոնք այդ փոքուն տեղն են
պատմում են Թէ երբ իրանք ելան տանիքը մի ու-
րի մկրց լսեցին, որից անմիջապէս յետոյ մարդիկ
դուրս Թալիսնակին. բայց իրանք արդէն փաւել էին.
այս տեղանքով պատմում են եւս ուրիշ տեղանքով

Ք) Մեր հեղեղիկը սկսվում է կազմելով, որ այդ
փոքրիկ ցեղերի շահությանն նկարագրում ենք, կամ
ազգայնական շահերի, նշյալ մասին հե-
տադրք՝ և մի վերջ:

Սէր ընկերութեան երկրորդ վիճակահանութեան տոմսակները, արդէն ծախուած են Թէհրանում, ցանկացողները կարող են գիմել Արամեան կանտորը:

Շնորհակալութեամբ լայտնում ենք, որ պ. պ. Եղբարք Թումանեանց տեղւոյս տունը, Դավրէժի, Մարազայի, Ղազվինի, Ռաշտի, Արտաքիլի, Մաշադի, Սաբգիվարի, Նիշաբուդի, Մաշադսարի, Բարֆուշի, Շահուդի, Դամղանի, Քէնարքիլի, Մուկվայի, Բագուի և Աստրախանի ճիւղերի համար էլ բաժանորդ է գրուել «Շախիդին»:

Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան ընդհանուր ժողովը, ինչպէս կարգացին արդէն ընթերցողները, հրաւիրւած էր անցեալ կիրակի, չը կայացաւ, որովհետեւ ըստ կանոնագրութեան, անգամակիցների գոնէ երկու երրորդը պէտք է ներկայ լինէին, այն ինչ ոչ իսկ կէսը ներկայ էր: Վաղը լինելու է կրկին ընդհանուր ժողով, որ վաւերական կը լինի ներկայ եղողների որ և իցէ թուով:

Ուրախութեամբ հրատարակում ենք պ. Գ. Զօհրաբեանի նամակը Զուղայու հայոց հասարակական ոգու մասին. հետեւալ համարով մենք կանենք մեր գիտողութիւնները:

Դավրէժի մեր գործակալ պ. Աբրահամ Մելիք-Աբրահամեանցի բացակայութեան ժամանակ, մեր բաժանորդները կարող են գիմել պ. Բաղդասար Մելիք-Սարգսեանցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Մշակից» քաղում ենք հետեւեալը: Լսում ենք որ Իջմիածնի հողէոր բարձր իշխանութիւնը մտադրութիւն ունի միանգամայն թեմական առաջնորդի որոշման թողնել այն հարցը, թէ արգելք որ և է անշն արժանաւորութիւն ունի քահանայ ձեռնադրուելու թէ ոչ, և դրա հետ միասին ձեռնադրութեան վերաբերեալ կարգադրութիւններ անելը:

— Նոյն լրագիրը հաղորդում է, որ ներկայումս Եվէյցարիայում այնքան հայ ուսանողներ և ուսանողհիներ կան, որքան շատ տարիներին ի վեր չեն եղել:

— Աշխարհում մօտաւորապէս 67 հոգի մեռնում են ամեն մի րոպէում, և 70 հոգի ծնւում, և այս փոքրիկ երևացող

առաւելութիւնը բաւական է տարեկան 1,200,000 հոգի աւելացնելու երկրագնդի բնակիչների վերայ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Փարիզ, 8|20 մարտ: Սէնտոր Բուլանժէն նշանակուած է գաղթականութիւնների նախարար:

Լոնդոն, 9|21 մարտ: Երեկ գիշեր համայնքների ժողովում, նաւատորմի նախահաշուի մասին տեղի ունեցած վիճարանութեան մէջ Հարկորտ ասաց, որ Անգլիայի ծովային ոյժի առաւելութիւնը խաղաղութեան ամենամեծ տարրն է, որովհետեւ Անգլիային թոյլ է տալիս հեռու մնալ Եւրոպայի դաշնակցութիւններից: Լուի Քօշուտ հունգարացի հաւրենաւորը մեռած է: Բրիտանական գերիշխանութիւնը հրատարակուած է Պանդոնլանդի վերայ: Լորդ Բոքերտոս, ընդունելով Նիւ-Քասթլի քաղաքացիութեան պատուանունը՝ ասաց որ ապագայի գործն է յօրինել մի կայսերական դաշնակցութիւն, որ նոյն չափով ընդունելի լինի գաղթականութիւններին, որչափ Մեծն Բրիտանիային: Նա ասաց որ վերին աստիճանի կարեւոր է ունենալ

նոյնչափ յարմար զինուորական ոյժ՝ որչափ լաւ նաւատորմ:

Լոնդոն, 10|22 մարտ: Բժիշկները լայտնում են, որ Գլադստոնի երկու աչքերն էլ թաղանթով բռնուած են, մէկ աչքի վերայ կարելի է առանց վնասելու օպերացիա կատարել երեք ամսից յետոյ: Ընտրողներին գրած մի նամակի մէջ Գլադստոնն ասում է, որ նա կը պահէ իւր աթոռը երեսփոխանական ժողովի մէջ, բայց ժողովին ներկայ գտնուելը կախուած կը լինի նորա առողջութիւնից:

Թէհրան 19|31 մարտի 1894
Դրամական արժէքներ (Բորսա)

	դոան	շաֆ
Պարսկական 20 դ. էջրէֆին արծէ	35	—
» 10 » » »	18	—
» 5 » » »	8	15
Ռուսական Ուկլին (պոլին)	40	—
» Մանէթը (րուբ.)	5	12
Անգլիական Լիրան	54	—
Ֆրանսական Ֆրանկը	2	2
Տաճկական Մէճրիէն	47	—

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց:

ՅԱՅՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹՈՒԱԿԱՆԻՆ
22-րդ ՏԱՐԻ „ՄՇԱԿ“ 22-րդ ՏԱՐԻ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն սրբագրամայով և նոյն ուղղութեամբ: „ՄՇԱԿ“ ստանում է սեփական հեռագիրներ:

„ՄՇԱԿԻ“ տարեկան գինը 10 րուբլի է, կէս տարվանը՝ 6 րուբլի, ամսական՝ 1 րուբլի: Գրվել „ՄՇԱԿԻՆ“ կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարոնիայա փողոցների անկիւնում):

„ՄՇԱԿԻՆ“ գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմել հետեւեալ հասցեով. Tiflis, Rédaction du journal arménien „MSCHAK“.

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ԲԱՅՈՒ ԵՒ Ռ. ՊԱՏՆԱՆԵԱՆ ԳԱՄԱՌ-ՔԱԳԻՊԱ

ՄԵԾԱԴԻՐ ԳԱՏԿԵՐՆԵՐԸ

Խրաքանկիւրի գիւնի է ճանապարհաժախտով

40 կ. գումարով ցանկացողներին գիջումն կը լինի:

Тифлисъ, Саркисъ Согомонянцъ կամ Tiflis Sarkis Sogomonian

Ղազվինու թաղի հայ աւետարանականաց եկեղեցում ամեն կիրակի օրերը կէս օրից երեք ժամ առաջ ս. գրքից դաս և բարոգութիւն կայ հայերէն լեզուով և չորս և կէս ժամ լատի աղօթքի ժողով: Մարտ 20 կիրակի առաւօտեան քարոզութեան նիւթն է, Յիսուս Նազովրեցին կանցնի, Կոյր Բարթոլոմէոսի աչքերը կը բացուին: Ղուկասու Ժբ. 42: